ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

---

<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4</u>

05 ՀՈՒՆԻՍԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 (ինը)

անդամներ:

Բացակա էին՝ Ա. Աբրահամյան, Մ. Աբրահամյան, Վ. Բաբայան, Ք. Մխիթարյան, Ա. Ակոպջանյան և Հ. Կարապետյան

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Արմեն Ծատուրյան, Անի Խաչատրյան

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ա. Ակոպջանյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը</u>

Լսեցին

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ՝ 4-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. <u>ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է*

1. Հաստատել 05-ը հունիսի 2024թ. թիվ 4-րդ արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

3.Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

4.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների դրամական օգնություն տրամադրելու մասին,

5.Եղեգիս համայնքի գույքագրման ցուցակներում լրացումներ կատարելու մասին,

6.02-ը փետրվարի 2024 թվականի «Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

7.Եղեգիս համայնքի ղեկավարի 31-ը մայիսի 2024թ. թիվ 113Ա որոշումն ի գիտություն ընդունելու մասին,

8.Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին ուղղված ուղերձ ընդունելու մասին,

9.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղային հանքերևակման տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար երկու տարի ժամկետով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:

10.Եղեգիս համայնքի ավագանու 11/04/2023թ. թիվ 45Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին,

11.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,02838հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

12.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,02683հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

13.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54Ա/

Լսեցին

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր 10-029-0109- , մակերեսը 0,50542հա,

2)կադաստրային ծածկագիր 10-029-0109- , մակերեսը 0,29հա:

2.Մեկնարկային գին սահմանել 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 1 Ձեռնպահ- 0
Չ մասնակցած-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55Ա/

Լսեցին

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է*

Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի հունիսի 26 -ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ________________/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 02/02/2024թ. թվականի թիվ 10Լ որոշումը, Եղեգիս համայնքի ղեկավարի 19/02/2024թ. թիվ 43Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է*

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու դրամական օգնություն:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ________________/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությա
ն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ
մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի
20/05/2024թ. թիվ108Ա որոշումը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Մորև ներկայացված զույքը զույքագրել Եղեգիսի համայնքապետարանի զույքային հաշվեկշռում՝

HONDA CR-V EXECUTIVE 2.4 մակնիշի, թեթև մարդատար տեսակի, 182DE61 համարանիշի, 2022թ. թողարկման փոխադրամիջոց- 17 400 000 ՀՀ դրամ:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58Ա/

Լսեցին

***02-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. Մ. ՕՀԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հաստատել Եղեգիս համայնքի 02 փետրվարի 2024 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 11 խումբ 01 դաս 02 ծրագիր 51՝ պահուստային ֆոնդ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891(պահուստային միջոցներ) հոդվածից 4 500 000.0 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, և

2)ավելացնել՝

ա.համայնքի բյուջեի եկամուտներ (հատված 1) 1392 տող՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր հոդվածին և նպատակաուղղել գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 ծրագիր 52 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59Ն/

Լսեցին

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31/05/2024Թ. ԹԻՎ 113Ա ՈՐՈՇՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. Ա. Պ...../

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է*

Եղեգիս համայնքի ղեկավարի 31-ը մայիսի 2024թ. «Շատին գյուղի նախկին բնակչուհի, հանգուցյալ Տատյանա Հայկազի Սիմոնյանի հուղարկավորությունը պատշաճ կազմակերպելու մասին» թիվ 113Ա որոշումն ընդունել ի գիտություն:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60Ա/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ՆԱՐԵԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61Ա/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի 44-րդ կետի ը) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով «Մենդիա Ռեսուրսիս» ՍՊԸ-ին տրամադրված երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/370 թույլտվությունը

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող ***համայնքային*** սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը երկու տարի ժամկետով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0241, մակերեսը 227,6956հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0242, մակերեսը 11,6498հա:

Ընդհանուր մակերեսը 239,3454հա:

2.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող ***պետական*** սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը երկու տարի ժամկետով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0239, մակերեսը 3,4855հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0172, մակերեսը 68,4593հա,

3)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0240, մակերեսը 4,6816հա,

4)կադաստրային ծածկագիր 10-041-0551-0001, մակերեսը 63,6282հա,

5)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0002, մակերեսը 49,7312հա,

6)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0017, մակերեսը 33,1763հա,

7)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0004, մակերեսը 14,9966հա,

8)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0007, մակերեսը 45,0հա,

9)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0042, մակերեսը 96,32385հա,

10)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0041, մակերեսը 310,7666հա,

11)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0040, մակերեսը 130,4622հա,

12)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0238, մակերեսը 34,0134հա,

13)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0018, մակերեսը 35,54741հա:

Ընդհանուր մակերեսը 890,27216հա:

3.Վարձավճարը սահմանել տարեկան 10 000 000( [illegible] ) ՀՀ դրամի չափով:

[illegible]

Կողմ- 7 Դեմ- 2 Ձեռնպահ- 0

[illegible]

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62Ա/

[illegible]

Լսեցին

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11/04/2023Թ. ԹԻՎ 45Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. [illegible] /

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 38.1.-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Չեղյալ ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու «Պետական սեփականություն հանդիսացող հողատեսքը կառուցապատման իրավունքով տրամադրմանը համաձայնություն տալու մասին» 11-ը ապրիլի 2023 թվականի թիվ 45Ա որոշումը:

Կողմ- 8 Դեմ- 1 Ձեռնպահ- 0

[illegible]

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02838ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ *ՄԱՍԻՆ*

/Զեկ. Ա. Ջուլհակյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 12-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.02838հա (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0535-) մակերեսով այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի՝ ինքնակամ կառույցի (էներգետիկ օբյեկտ) օրինականացման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ- 8 Դեմ-1 Ձեռնպահ- 0

Ա. Ջուլհակյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02683 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ *ՄԱՍԻՆ*

/Զեկ. Հ. Գասպարյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 12-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.02683հա (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0800-) մակերեսով այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի՝ ինքնակամ կառույցի (էներգետիկ օբյեկտ) օրինականացման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ- 8 Դեմ- 1 Ձեռնպահ- 0

Ս. Մարգարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ *ՄԱՍԻՆ*

/Զեկ. Հ. Գասպարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության օգտագործման տրամադրելուն՝

1)Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի «Ջանի» կոչվող հանդամասում գտնվող 800 (ութ հարյուր) հա մակերեսով արոտը վարձակալության օգտագործման տրամադրել Երասխ գյուղի բնակիչ Խոր Ալիի Խուդոյանին:

2)Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի «Ջանի» կոչվող հանդամասում գտնվող 100 (մեկ հարյուր) հա մակերեսով արոտը վարձակալության օգտագործման տրամադրել Եղեգնաձոր համայնքի բնակիչ Խաչիկ Վաղարշակի Մարտիրոսյանին:

3)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Խաչիկի սար» կոչվող հանդամասում գտնվող 450 (չորս հարյուր հիսուն) հա մակերեսով արոտը վարձակալության օգտագործման տրամադրել Շատին գյուղի բնակիչ Արտյոմ Վիգենի Վարդանյանին:

4)Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի «Ջանի» կոչվող հանդամասում գտնվող 150 (մեկ հարյուր հիսուն) հա մակերեսով արոտը վարձակալության օգտագործման տրամադրել Մալիշկա գյուղի բնակիչ Նորայր Աշոտի Հովհաննիս յանին:

5)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանքի տարածք» կոչվող հանդամասում գտնվող 5 (հինգ) հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Վարդան Կարլենի Գեղամյանին:

6)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանքի տարածք» կոչվող հանդամասում գտնվող 2 (երկու) հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Շատին գյուղի բնակիչ Վիկտոր Սենիկի Մելքոնյանին:

7)Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանքի տարածք» կոչվող հանդամասում գտնվող 3 (երեք) հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Շատին գյուղի բնակիչ Արթուր Սենիկի Մելքոնյանին:

8)Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագիր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

*Նիստն արձանագրեց՝* Աննա Դանիելյանը ____________________